

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

ՍԱՔՍՈՆԻԱՅԻ ԱՐՔԱՅԱԶՆ ՄԱՔՍԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբերի 14-ին Մաքսանական պրինց և այժմ՝ քահանայ Մաքսիմիլիանը այցելութեան եկաւ Մ. Աթոռա Նորան գիմաւորելու էր գնացել հայրապետական կառքով երկաթուղու կայարանը Տ. Կարապետ վարդապետ։ Նա ծնուել է Դեզդրենում՝ 1870 թուին. նորա մայրն էր Մարիա, Պորտուգալիայի արքայազն Իշխանուհին, իսկ հայրը Գէորգ թագաւորը։ Իշխանի պապը Իոհան թագաւորն է, որ նշանաւոր է հանդիսացել ոչ միայն իբրեւ պետական անձն, այլ և իբրեւ գիտնական. նա հրատարակել է Դանտէի Աստուածային կատակերգութեան թարգմանութիւնը։ Մաքսոնիայի ներկայ թագաւորը Ֆրիդրիխ Ալբրուստ՝ արքայազնի աւագ եղբայրն է։ Իշխանի քոյրերից մէկը՝ Մարիա Իսղեփա, հանգուցեալ աւստրիական մեծ դուքս Օտտոյի ամուսինն է, որի որդին Կարլ Ֆրանց Իոզեֆ՝ մեծ դուքս Ֆրանց Ֆերդինանդից յետոյ՝ Աւստրիայի կայսերական գահի ժառանգն է։

Արքայազն Մաքսը իւր համալսարանական ուսումն աւարտելուց յետոյ՝ զինուորական ծառայութեան մէջ էր, երբ վճռեց թողնել աշխարհիկ կեանքը և քահանայ դասնալ։ Նորա դաստիարակներից երկուսն էլ ազնուական Ֆոն Օեոր և Ֆոն Ֆրիտցեն նոյն ճանապարհն են ընտրել. առաջինը Բենեդիկտեան է Պրագում, իսկ երկրորդը Ստրասբուրգի եպիսկոպոսն է։ Արքայազն Իշխանը եկեղեցական և պետական իրաւաբանութեան գործողների գիտնական աստիճանն ունէր արդէն. ապա աստուածաբանութիւն ուսանելուց յետոյ՝ ստացաւ նաև այս գիտութեան դոքտորի աստիճան։ Իբրեւ քահանայ՝ ուսուցչապետութեան պաշտօն ունի Զուլիցերիայի Ֆրայբուրգ քաղաքի համալսարանում, դասախօսութիւններ է կարդում ի միջի

այլոց Հայոց եկեղեցու ժամապաշտութեան մասին և հեղինակ է մի քանի կարևոր գրուածներէի: Նորա մասնագիտութիւնը արեւելեան եկեղեցիների ժամապաշտութիւնն է, որոնց թուում և Հ. եկեղեցու: Այդ նպատակի համար նա ուսել է Հայոց գրաբար լեզուն և ուսումնասիրել է մեր հին մատենագրութիւնը:

Իշխանը Մայր Աթոռ ժամանելուց յետոյ՝ անմիջապէս թոյլտուութիւն խնդրեց Մայր տաճարում պատարագելու, եկեղեցի իջաւ և Յովհաննու Մկրտչի սեղանի վերայ լատինական լուռ պատարագ մատոյց, ապա գիւանապետ Տ. Յուսիկ և Տ. Կարապետ վարդապետների առաջնորդութեամբ ներկայացաւ Ն. Սրբութեան: Իշխանը Ն. Սրբութեան հետ խօսում էր գրաբար. նա իւր համակրանքը յայտնեց՝ «սիրեմ զեկեղեցին Հայոց, զերկիր և զժողովուրդ» խօսքերով: Ապա փոքր ինչ հանդստանալուց յետոյ՝ արքայազնը դիտեց Մ. Աթոռի հնութիւններն ու հաստատութիւնները. իշխանին առաջնորդ էր նշանակուած Տ. Կարապետ ծ. վարդապետ: Երկար դեգերեց իշխանը յատկապէս Մ. Աթոռի ձեռագրատանը, ուր ընդունեցին նրան մատենադարանատետի բացակայութեան պատճառով Տ. Տ. Եղիա և Գալեգին վարդապետները. վերջինս ցոյց տուեց մի շարք արժէքաւոր և պատմական անձնաւորութեանց՝ հայ թագաւորների, հայրապետների և մատենագիրների սեպհականութիւն եղած կամ նրանց ձեռքով գրուած ձեռագիրներ: Իշխանը շատ հետաքրքրւում էր տօնականներով և առհասարակ ժամապաշտութեան վերաբերեալ ձեռագիրներով: Մատենադարանից անցաւ տաճարի խորաններում պահուած հնութիւնները դիտելու և համբուրելու մասունքները: Ապա Տ. Կարապետ և Երուանդ վարդապետների ուղեկցութեամբ անցաւ ճեմարան, ուր տեսուչը՝ պ. Մինաս Բերբերեան՝ ընդառաջ եկաւ բարձր հիւրին և բարի գալուստ մաղթեց: Իշխանը այցելեց մատենադարանը, հիւանդանոցը, ննջարանը, մտաւ դասարանները. այստեղ դառնալով տեսչին հարցրեց. «Ամենեքեան եղիցին քահանայք»: Պ. Տեսուչը

միայն դժուարութեամբ կարողացաւ պատշաճ պատաս-
խան տալ, իշխանին յայտնի չէր, թէ վերջին տարիներս
մաքերի ինչ տեսակ շփոթութիւն է տիրում մեր հասա-
րակութեան որոշ խաւերի և նրանց ազդեցութեան տակ
նաեւ ճեմարանի աշակերտութեան մէջ:

Ճաշին իշխանի սեղանակից էին քացի նորա քար-
տուղար պ. Բուդուֆ Ամբերգից, որ իրաւաբանութեան
կանդիդատ է, և Տփլիսի հայ կաթողիկոսների հովիւ Դաբ-
րիէլ վ. Նահապետեան, Վենետիկի Միլիթարեան ուխտից,
որ Թիֆլիսից ուղեկցում էր Ն. Բարձրութեան, Տ. Տ.
Կարապետ, Յուսիկ, Դարեգին, Երուանդ և Ուխտանէս
վարդապետները և ճեմարանի տեսուչն ու պ. Միսաք
Խոտաիկեան: Խօսակցութեան լեզուներն էին գերմաներէն,
ֆրանսերէն և հայերէն: Կարապետ վարդապետը գերմա-
ներէն առաջարկեց իշխանի կենացը, իսկ իշխանը հայերէն՝
«վասն կենդանութեան Ն. Սրբութեան», հ. Դաբրիէլը
ֆրանսերէն էջմիածնի սլայծառութեան: Սեղանակիցները
յոտնկայս երգեցին «էջ Միածինն ի Հօրէ» շարականը, Պ.
Բերբերեանը շնորհակալութիւն յայտնեց իշխանին, որ նա
հաճել էր այցելել ճեմարանը և շեշտեց այն հոգևոր կապը,
որ կայ ճեմարանի և գերմանական դիտութեան ու քա-
ղաքակրթութեան մէջ: Ճաշկերոյթը կրում էր միանգա-
մայն ընտանեկան բնաւորութիւն. արքայազնի պարզ, սի-
րալիր և բարեկամական վերաբերմունքը դէպի իւր շրջա-
պատողները նման զգացմունք էր յառաջ բերում և նրանց
մէջ: Ճաշից յետոյ իշխանը այցելեց ս. Հռիփսիմէի վանքը
և Զուարթնոց աւերակները վերոյիշեալ անձանց ուղեկ-
ցութեամբ:

Ուրբաթ երեկոյ, շաբաթ և կիրակէ առաւօտները նա
ներկայ էր ժամերգութեան, իսկ առաւօտեան ժամեր-
գութիւնից յետոյ Մայր Տաճարում կամ Դայիանէի վան-
քում լատինական լուռ պատարագ էր մատուցանում:
Տարաբաղդաբար եկեղեցական երգեցողութեան մասին
Մայր Աթոռի երաժշտապետի՝ Տ. Կոմիտաս վարդապետի
բացակայութեան պատճառով, չէր կարող նա այն տպաւո-

յութիւնն ստանալ, ինչ որ կատանար երկու տարի առաջ։
Սեպտյա 15-ին իշխանը փափաքելով համբուրել ս.
Միսրոպի գերեզմանը՝ իւր հետեւորդներն և Կարապետ ծ.,
վարդապետի ուղեկցութեամբ մի փոքրիկ ճանապարհոր-
դութիւն կատարեց դէպի Քասախի հովտի սրբավայրերը։
Օշականում առանձին ջերմեռանդութեամբ ծունկ խո-
նարհեց և աղօթեց Հայոց նշանագրերը յօրինող ս. վար-
դապետի գերեզմանի առաջ. ապա եկեղեցու բակի
ծխական դպրոցը մտնելով՝ սիրալիր խօսակցութիւն ու-
նեցաւ ուսուցիչներին հետ։ Մոզնեոյ ս. Կէորգի գեղեցկա-
կերտ տաճարը և մանաւանդ Յովհաննավանքի փառահեղ
աւերակները, սոցա ոտքի տակ ձգուող սէգ, ապառա-
ժուտ, անդնդախոր ձորը և առհասարակ ամբողջ հովիտը
իւր գեղեցիկ բնութեամբ, պերճ այգեստաններով զօրեղ
ապաւորութիւն թողեց իշխանի վերայ։ Կարբւոյ եկեղե-
ցում՝ պահուած ձեռագիր տօնականը առանձնապէս գրա-
ւեց նորա ուշադրութիւնը, որ մի առ մի թերթելուց
յետոյ՝ ցանկութիւն յայտնեց նոյն իսկ առատ վարձա-
տրութեամբ ձեռք բերելու այդ ձեռագրի ընդօրինակու-
թիւնը։ Աշտարակում՝ վանքապատկան այգում՝ Տ. Ներ-
սէսի հոգացողութեամբ իշխանի համար համեստ ճաշ էր
պատրաստուած և նա շատ գոհ մնաց, որ առիթ էր ու-
նենում այսպէս գիւղական հայի սեղանին նստելու, ան-
պաճոյճ ձևով մատուցած պարզ խորտիկներ վայելելու։
Այս ճաշկերոյթը նորան շատ զուարճացրեց և նա շատ
ուրախ տրամադրութեամբ վերադարձաւ ուղեգնացու-
թիւնից։

Սեպտյա 16-ին պատարագից յետոյ իւր հրաժեշտի
ողջոյնը տալով Ս. Հայրապետին՝ իշխանը մեկնեց Մայր
Աթոռից. մինչև վանքի արտաքին մեծ դարբասը ուղեկից
եղան իշխանին ծանօթանալու պատիւն ունեցող վարդա-
պետներն ու ուսուցիչները. ժողովուրդը լռելեայն, յար-
գանքով ողջունում էր ճանապարհի երկու կողմից։ Իշխանը
ցաւ էր յայտնում, որ ժամանակի սղութեան պատճառով
աւելի երկար չէր կարող մնալ Էջմիածնում։ Կարապետ

Տ. վարդապետն ուղեկցեց իշխանին մինչև երկաթուղու կայարանը, ուր նա կրկին և կրկին անգամ շնորհակալութիւն անելով իրեն եղած սիրալիր ընդունելութեան համար, ջերմ ցանկութիւն էր յայտնում ապագայում կրկին Ս. Էջմիածին այցելելու կամ այստեղի ծանօթներին իւր մօտ հիւր ընդունելու:

Այսպէս պարզ էր և համեստ մեր ընդունելութիւնը, սակայն սրտանց:

Սեպտ. 9-ին Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսը Ն. Սրբութեան հրամանով ծայրագունութեան աստիճան տուաւ Կարապետ վարդապետ Տ. Մկրտչեանին:

Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ դարձաւ Տ. Գրիգոր Եպիսկոպոս Գառնակերեան, որ $1\frac{1}{2}$ տարի առաջ ուղևորուել էր Երուսաղէմ՝ Ս. տեղերին երկրպագելու: Սրբազանը 3 ամիս մնացել է Երուսաղէմում և վայելել է Սրբազան Յարութիւն Ամենապատիւ Պատրիարքի և միաբանութեան սիրալիր հիւրասիրութիւնը:

Ն. Սրբութեան կոնդակով կարգադրուած է մեր ծխական դպրոցների համար թեմական տեսուչներ ընտրելու Երևանի և Թիֆլիսի թեմերի մեծութեան պատճառով երկ երկու տեսուչ կընտրուին: Թեմական տեսուչների ընտրութեան դործը յանձնուած է թեմական դպրոցների հոգաբարձութիւններին: Շամախու թեմում հոգևոր դպրանոց չլինելու պատճառով, նոյն իրաւունքը յանձնուած է Բազումի ծխական դպրոցների հոգաբարձութիւններին: Թեմական տեսուչների ընտրութիւններից յետոյ՝ երբ հոգաբարձութիւնների կողմից կառաջարկուին Ն. Սրբութեան ի հաստատութիւն, յատուկ շրջաբերական կոնդակով հրահանգներ կտրուին նրանց պարտքի և իրաւանց սահմանների մասին: